



Ա.ԶԱՏ ԽՅՄՔ

ՇԱԲԱԹ 6 ՀՈԿՏ . 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ԲԱՅՈՒՄ ԵՒ ՓԱԿՈՒՄ ՊՕՂՈՅՆԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դէպքերով բեզուն շարաթ մը Ալեքսանդրիոյ համար, այս շաբաթ: Միթիւնկ, ճառարխօսութիւն, ցոյց, վարժարանի գրաւում, բանալիներու յանձնում, կառավարական միջառութիւն, ևն. վերջապէս բոլոր այն արարողութիւնները որոնք ա՛լ սովորական դարձան մեր ազգային շըջանակին մէջ, շնորհիւ առաջնորդարանի մէջ տիրող անխխտանական վիճակին:

Այս անգամ ժողովրդային զայրոյթը պայթեցաւ Պօղոսեան վարժարանի տնօրէն՝ Տ. Սըմբատ Իւրատի գլխին:

Երեքշաբթի օր, հոկտեմբեր 2, դպրոցի վերաբացման օրն էր. ուսուցիչ և վարժուհի հեկած էին իրենց պաշտօնին գլուխը, բայց աշակերտ ու աշակերտուհի իրենց բացակայութեամբը կը փայլէին, ի բաց առեալ քանի մը տղաք որոնք

բակը իրենց սովորական պիլիան կը խաղային:

Սմբատ Բիւրատ տ'աւուր էր և մռայլ, ինչպէս Յիսուս Գեթեմանիի պարտէզին մէջ:

- Ահա՛ ուսուցիչք եւ ահա՛ դասագիրք, կը մտածէր ինքնիրեն, այլ ո՛ւր են տղայք դպրոցականք:

Եւ զարմանալի՛ երևոյթ, փոխանակ ուսումնատենջ մանկուոյն, փողոցին դռնէն հետզհետէ ներս կը մտնեն պեխաւոր մարդիկ, գաւազանակիչ ու անգաւազան:

Վարժապետ ու վարժուհի իրարու երես կը նային ապուշ կտրած:

- Ի՞նչ, իրենց աշակերտներն են որ երեք ամսուան արձակուրդի միջոցին այսքան մեծցեր են . . . :

Աւա՛ղ, ո՛չ, վարժարանին վիճակէն դժգոհ ծնողքներն են որ կուգան վարժարանը փակելու մինչև ցնոր տնօրինութիւն:

Ու ահա՛ բանակցութիւնները կը սկսին տընօրէնին և կիբակի օրուան միթինկով ընտրուած առժամանակեայ դպրոցական յանձնախմբին միջեւ, որպէսզի վարժարանին փակումը կատարուի առանց անհաճոյ միջադէպներու:

Տ. Սմբատ Բիւրատ կ'ընդդիմանայ, շատ դառն կը գտնէ իրեն ներկայացուած բաժակը:

- Հա՛յր, անցուր ինէ այս բաժակը, կը մըրմընջէ:

Դոյն միջոցին հաւը կը խօսի և վարեապետ
ու վարժուհի, որոնք դասարան մը հաւաքուած
էին, կ'ուրանան իրենց տնօրէնը:

- Մենք այն նազովրեցին չենք ճանչնար, կը
գոչին:

Այն ատեն Սմբատ Բիւրատ վազվազակի կը
մտէ գասարան ու կ'ըսէ.

- Ամէն ամէն առեմ ձեզ, ինչպէ՞ս կ'ուրա-
նաք զիս, միթէ մոռցա՞ք երեք տարիէ ի վեր
մեր միասին ըրած վերնատան ընթրիքն՝ ըր, մեր
հրաշալի ձկնորսութիւնները, պլտոր շուրերու
մէջ

Նոյն միջոցին հաւը նորէն կը խօսի եւ ու-
սուցչական մարմինը նորէն միաձայն կը գոչէ:

- Մենք չենք ճանչնար այս նազովրեցին:

Այն ատեն ժողովուրդը կը փակէ դասա-
րաններու դռները և Տ. Միհրան Թեղեանի քով
աւանդ կը ձգէ բանալիները որոնք՝ շուարած ի-
րարու կը փսփոսային.

- Նորէն ի՞նչ կ'ուզեն այս մարդիկը մենէ:

- Եւ ահա՛ ձայն մը կը լսուի Թեղեանին մէ-
ջէն:

- Ո՛վ դպրոցական յանձնախումբ Մուհաֆա-
զա հրամանեցէք քիչ մը:

Ի պրոցական յանձնախումբի անդամները
կ'երթան կառավարչատուն ուր զիրենք կ'ընդու-
նի Վոեմ: Կառավարիչը, քիչ յետոյ հոն կը հրա-

ւիճուի նաև Բարթոլոմէոս փաշա եւ բանակցութիւն մը կը սկսի որոշելու համար թէ ո՞րն է այն ձեռնհաս իշխանութիւնը որ պիտի կրնայ կարգադրել դպրոցին խնդիրը: Վերջապէս Վսեմ. կառավարիչը կը յայտարարէ թէ իբրև օրինաւոր իշխանութիւն՝ ինք Գեր. Առաջնորդը կը ճանչնայ հետևաբար պէտք է որ ան անօրինէ պարտ ու պատշաճը:

Եւ կ'որոշէ Գահիրէէն հոս հրաւիրել անվիջապէս Աղաւնունի վարդապետը ու մինչև անոր գալուստը փակ պահել վարժարանը:

ՈՐԸ ԻՐԱՆԻ ՈՐԸ ՍՈՒՏ

Յայտնի է որ Ալեքսանդրիոյ տեղական ազգային գործերը քառուղէ անիւններու վրայ դըրուած կառքի մը պէս կանոնաւոր կերպով առաջ պիտի երթան երբոր Վսեմ. Պօղոս փաշա նուպար և Արթին պէյ Րէիզեան վերագառնան Եւրոպայէն և իրենց համբաւաւոր տեսակցութեան արդիւնքը վայելել տան մեզ:

Միայն թէ, խնդիր մը կայ որ այժմէն ըսկըսած է մտահոգութիւն պատճառել օրինաւոր ազգային իշխանութեան սիրահարներուն:

Վսեմ. Պօղոս փաշա և Արթին պէյ Եգիպտոս պիտի հասնին հոկտեմբերի վերջը, բայց իրենց յղացած կարգադրութիւնը գործադրելու համար անհրաժեշտ պէտք ունին եզեր, Վսեմ.:

Միհրան խան Գալֆայեանի որ այս միջոցիս Եւրոպա կը գտնուի: Հետեւաբար հարկ պիտի ըլլայ սպասել խանին վերադարձին: Միհրան խան պիտի դայ փետրուարի վերջերը և ցաւալի անպատեհութեամբ մը վսեմ: Պօղոս փաշա մարտի սկիզբը անպատճառ պիտի մեկնի Եւրոպա մէնչև մայիս հոն մնալու համար:

Մայիսին եբբ հոս վերադառնայ սպասողաբար Արթին պէյ և գուցէ Գալֆայեան խան իրենց ամառնային օդադնացութեան մէջ պիտի ըլլան յԵւրոպա:

Զգիտցուիր թէ ե՞րբ վերջ պիտի գտնեն այս երթևեկութիւնները եւ ե՞րբ կարելի պիտի ըլլայ միևնոյն ամսուն մէջ մէկտեղ հաւաքել բոլոր այն անձնաւարութիւնները որոնք մեր տեղական հարցը կարգադրելու նախախնամական պաշտօնին կոչուած են:

Տ. Աստուր պէյ Շէրիտճեան, մեծանուն հոգաբարձուն Պօղոսեան դռնփակ վարժարանին, վերադարձած է Եւրոպայէն Ալեքսանդրիա:

Աստուր պէյ իմանալով որ իր բացակայութեան ժամանակ դպրոցական յանձնախումբ մը կազմուած է վարժարանը կարգ կանոնի դնելու համար, անմի ապէս փաստաբանի դիմած և դատ բացած է յանձնախումբի անդամներուն դէմ: Աստուր պէյ իրրև պաշտօնի յափշտակիչ կ'աւ-

բաստանէ յիշեալ անդամները, ըսելով թէ իր կենդանութեան ատեն ո՛չ ոք իրաւունք ունի Պօղոսեան վարժարանին խառնուելու և թէ ինք Պօղոսեան վարժարանի հոգաբարձութեան մե- նաշնորհը ստացած է վսեմ: Բարթող փաշայէն:

Ինչպէս ըսինք քիչ մը վերը, Պօղոսեան վար- ժարանի փակումը պատմած ատեննիս, վսեմ. կառավարիչը հրաւիրած էր մեր արժ. Առաջ- նորդը որ մինչեւ հինգշաբթի օր Գահիրէէն Ա- լեքսանդրիա հրամմէ, վարժարանի խնդիրը կար- գազրելու համար:

Այսօր, շաբաթ, տակաւին նորին արժանա- պատուութիւնը իր մօրուքին ծայրը ցոյց չէ տը- ւած իր Ալեքսանդրիոյ ոչխարներուն և շատ հա- ւանական է որ Աղաւնունի վարդապետ փութ- կոտութիւն ցոյց չիտայ գալու Ալեքսանդրիա ո- րուն օգը. ազգային տեղական օգը մասնաւորա- բար, անհանգստութիւն կը պատճառէ միշտ նո- լին արժանապատուութեան փափուկ կազմը- ւածքին:

Բայց նոյնիսկ ենթադրենք թէ Աղաւնունի վարդապետ բարեհաճի, ամէն զօհողութիւն յան- ձրն առնելով, պատասխանելու իրեն ուզողւած հրաւերին. կը կարծէ՞ք թէ իր գալուստը բանի մը ծառայէ:

Ահա՛ մտաւորապէս սարի մըն է որ Օր-

մանեան պատրիարք մեզ նուէր զրկած է Աղաւ-
նունի վարդապետը և տակաւին չեղաւ անգամ
մը որ իր ձեռնհասութեան ներկայացուած խըն-
դիր մը կարենար կարգադրել ժողովրդին փա-
փաքներուն համեմատ:

Ի՞նչ պատճառ ունինք այժմ աւելի լաւա-
տես ըլլալու իր գործունէութեան մասին:

Եթէ մենք քիչ մը հաւատք ունենայինք թէ
հոս իր ներկայութենէն օգուտ մը պիտի ըլլար,
կրնայինք շատ ճարտար հնարք մը գտնել զինքը
անմիջապէս հոս բերել տալու համար:

Փոխանակ լաւ զրկելու իրեն որ Ալեքսան-
դրիա գայ Պօղոսեան վարժարանի խնդիրը կար-
գադրելու, բաւական էր քանի մը տողով սա ձև
հեռագիր մը զրկել իրեն:

«Հարուստ ննջեցեալ մը կայ. թաղումը պի-
տի կատարուի վաղը, ձեզի կը սպասենք թա-
փօրին նախագահելու համար:»,

Եւ մեր Առաջնորդը Սուրհանդակ Աղաւնիի
մը արագութեամբ պիտի թռչէր հոս:

Բայց վստահ եղի՛ք, հեռապրին դրամը վրայ
պիտի երթար:



ՄԻՔԷԻ ՍԻՐԱՐԿԱԾԸ

(1)

(Ե Ր Պ Ի Ծ Ա Ա Ա Ն Վ Ի Պ Ա Կ)

Ա

- Սուտ է, անկարելի է:

- Կարգն, բարեկամ:

Եւ Մարտիկ ձեռքի բռնած լրագիրը երկնցուց խօսակցին՝ Միքէի:

Միքէ թեթեւ դողահար ձեռքով մը առաւ, բայաւ եւ ազգային լուրերու բաժնին մէջ կարգաց հետեւեալը.

«Երէկ Պատրիարքարանի մէջ, ի ներկայութեան երկու կողմանց ազգականներու եւ բարեկամներու, տեղի ունեցաւ Սարգիս էֆէնտի Քըրքեալանեանի նշանախօսութիւնը ընդ օր. Սրբուհի Կիսկատարեանի:

«Սարգիս էֆէնտի Կ. Պոլսոյ առևտրական հրապարակին մէջ կարեոր գիրք մը կը գրաւէ եւ ամենուն համակրանքն ու յարգանքը գրաւած է. իսկ օր. Սրբուհի խնամեալ կրթութեան մը կը միայնէ շնորհալի գեղեցկութիւն մը եւ պատիւ կը բերէ հայ իգական սեռին: Մեր անկեղծ շնորհաւորութիւնները Քըրքեալանեան եւ Կիսկատարեան գերզաստաններուն»

Միքէ երբ ընթերցումը լմնցուց, թերթը ձեռքէն ձգեց, աջ ձեռքը սրտին տարաւ եւ ըսաւ.

- Բան մը կ'ըլլամ կոյ:

- Բան մը չես ըլլար, պատասխանէ, Մարտիկ փիլիսոփայաբար եւ երկուքը միտսին թիւնէլի հրապարակէն Բերայի Մեծ Փողոցը ուղղուեցան:

Միքէ անակնկալ հարուածին ուժգնութենէն չըմտրած՝ անկարող կ'ըլլար խօսք մը ըսելու, Մարտիկ

յարգանք մը մատուցանելու համար իր բարեկամին հոգեկան զիճակին, ինքն ալ տխուր լուռթիւն մը կը պահէր:

Երբ քիչ մը քաշեցին, Միքէ կամաց կամաց սկսաւ իր խօսելու կարողութիւնը գտնալ. նախ՝ առանց բայի, անկապակից բառեր արտասանեց, որոնց մէջ կային գոյականներ, ածականներ, յատուկ անուններ եւ նոյնիսկ մակբայներ:

- Ի՞նչ... բայց դեռ առջի օր, ո՞ն սարսափելի բան է ստիկա, Սրբուհին, անկարելի բան, խաբեբան...:

- Հանդարտէ, եղբայր, հանդարտէ, կը խրատէր Մարտիկ, կը զգամ վէճակիդ ծանրութիւնը, բայց ջանա՛ այդ ծանրութեան բարձրութեանը հաւասարիլ:

Որչափ որ դժուար էր այդ խրատին հետեւիլը, այսուհանդերձ Միքէ հաւանեցաւ իր խօսքերուն մէջ աւելի իմաստ դնիլ, քերականական ուրիշ մասունք բանիներու գործածութեամբ:

- Ո՞վ է եղեր այդ Սարգիս էֆէնտին որուն կը հանեն աղջիկնին կուտան կոր, գոչեց բարկութեամբ, վաճառականին մէկը, տասը հազար ոսկի ունի եղեր, ինչ կ'ըլլայ աղբար, քանի՛ փարա կ'ընէ...:

- Տասը հազար ոսկե՞դ ճիշտ քառասուն միլիոն փարա կ'ընէ, ընդմիջեց Մարտիկ, առանց խորհելու թէ իր թուարանական կարողութիւնը զոյց տալու յարմար վայրկեան մը չէր հիմակ:

- Ձգէ կատակը, շարունակեց Միքէ, սիրոյ հետ չեն խաղար... Ինչ պիտի ընէ Սրբուհին այդ կոչտ մարդուն հետ. այդ անկիրթ հէօտիւկին հետ, այդ տգէտ ապուշին հետ...:

Եւ անշուշտ Միքէ պիտի շարունակէր իր հակառակորդին դիտուն տեղալ տակաւին անհաճոյ ածականներ, երբ Մարտիկ դիմացէն եկող երիտասարդ մը

ցոյց տալով՝ ուրախութեամբ գոչեց.

- Վնայ, միւսիւ Տիրանը...

Միւսիւ Տիրան մօտեցաւ երկու բարեկամներուն և առանց պայմանադրական բարևառօքի արարողութիւններու, կորովի նկարագրի տէր մէկու մը պէս որ իր որոշումները վճռաբար կուտայ եւ բռնապէս կը գործադրէ, ըսաւ.

- Եսնիին մտնենք ու մէյմէկ պիտա խմենք:

Յետոյ, հրամանատարի մը պէս որ պատերազմի տաք միջոցին կարևոր հրահանգ մը կուտայ տեղակալի մը, գոչեց.

- Շնուտ, սիկառէթ մը տուէք ինձի:

Վայրկեան մը վերջը երեք բարեկամները Եսնիի գարեջրատան մէջ բազմած էին մարմարեայ սեղանի մը շուրջը:

Թողունք զիրենք իրենց գարեջուրի գաւաթները պարպելու և քանի մը բառով ծանօթացնենք մեր ընթացողներուն այն երեք երիտասարդները որոնց կը հետեինք թիւնէլի հրապարակէն:

Մեր պատմութեան զլխաւոր հերոսը՝ Միքէ քսանըհինգ տարեկան երիտասարդ մըն էր, թաղային վարժարանէ մը չըջանաւարտ եւ վեց տարիէ ի վեր հայ վաճառականի մը քով գրագիր: Իր նկարագրին զլխաւոր յատկանիշներն էին միամտութիւն և թեթեւութիւն, որոնք միացած էր նաև ինքնահաւանութիւն մը՝ ծիծաղաշարժ ըլլալու աստիճան: Այսուհանդերձ բարեմիտ էր և չարութեան անկարող: Բարեձև հասակ մը, սև, ազւոր աչքեր, գուցէ քիչ մը անարտայայտիչ, ոլորուն պեխեր դէպի վեր ցցուած, քիթէն անբաժան ակնոց մը և ժաքէթին վերի գրպանէն զլուխը դուրս հանած մետաքսէ գունաւոր թաշկինակ մը իր արտաքինը կը կազմէին: Զբօսասէր էր և իր ընկերակցու-

Թիւնը հաճելի Գրագրութենէ զուրս իր զլիաւոր բզրազումն էր սիրարանութիւն:

Մարտիկ՝ Միքէի դպրոցական ընկերը և այժմ ալ պաշտօնակիցը, թէև ուրիշ վաճառականի մը քով, զբրեթէ նոյն տարիքը ունէր, բայց աւելի լուրջ ու խելաւի էր: Դպրոցը ձգելէն ետքը ջանաւորած էր իր ուսման պաշարը աւելցնել ինքնաշխատութեամբ և յաջողած էր: Կատաղի ընթերցասէր մըն էր և բոլոր պարտալ ժամանակը կարդալով կ'աննէր:

Գալով Տիրանի, երեքին մէջ ամէնէն զարգացեալն էր, ուսմունքը աւարտած էր Պէրպէրեան վարժարանին մէջ և քիչ մը ժամանակ իրրև հաշուակալ ծառայելէ յետոյ սեղանաւորի մը քով, որ մը ձեռատետր և Մայր Հաշիւ նետած էր իր մեծաւորին երեսին ու գացած էր իրրև օգնական խմբագիր աշխատակցելու հայ օրաթերթի մը: Հիմակ բաւական համբաւ շահած էր զրահան հրապարակին վրայ և իր քրոնիկները, Փանթէզիները, վիպակները հաճոյքով կը կարգադրէին: Տիրան իսկապի, զուարթ ու կատակասէր, միշտ հաճոյքով կը փնտռուէր իր ծանօթներէն:

Հիմակ որ քիչ մը ճանչցաք մեր բարեկամները, դատնանք գարեջուրի սեղանին քով:

- Ի՞նչ ունիս այդպէս երեսդ կախեր ես, հարցուց Տիրան միքէին, անոր լուրջարկաւորական թափօրի մը պէս տխուր դէմքը տեսնելով:

- Զգէ, եղբայր, պատասխանեց Սարտիկ, խեղճին մեծ զգբախտութիւն մը պատահեցաւ:

- Սիկառէթը հատաւ, թէ տանտէրը սենեակի վարձքը կը պահանջէ կոր, հարցուց Տիրան որուն համար այդ երկու իրողութիւնները սոխարհի մեծագոյն պօքազղութիւններն էին, թէև ամէնէն աւելի յաճախադէպ իրին համար:

- Չէ, պատասխանեց Մարտիկ, եղբրական ձայնով, Միքէ այս վայր՛եանիս սրտէն վիրաւորուած է :

- Կարս՞ն, սա գաւաթները լիցուր, հրամայեց Տիրան :

Յետոյ՛ Միքէի դառնալով, լուրջ կերպարանքով մը աւելցուց .

- Միքէ, ես բաւական ուսումնասիրած եմ բժշկութիւնը և մինչև հիմակ կը կարգամ այդ նիւթին վերաբերեալ նորագոյն հրատարակութիւնները, արդ, սրս է վիրաւորուածներու լաւագոյն սպեղանին ըսպելիքն է, իմէ՛ք քանի մը գաւաթ եւ վէրքդ կ'առողջանայ :

Միքէ տիրորէն գլուխը օրօրեց . իր բարեկամին կատաւները, այդ դժնդակ վայրկեանին, բոլորովին յուսահատութեան կը մասնէին վիճքը :

Մարտիկ աչք ըրաւ երիտասարդ խմբագրին որպէսզի չչարունակէ իր ծաղրական կատակարանութիւնները :

- Ուրեմն լուրջ է, ըսաւ Տիրան, այս անգամ հանդիսական ձայնով մը :

Այն ատեն Մարտիկ ծոցաւ Տիրանի ականջին և խորհրդաւոր կերպով փսփսայ :

- Սրբուհին նշանուեր է... :

Տիրան գարեջուրի գաւաթը զոր շուրթունքին տանելու կը պատրաստուէր, սեղանին վրայ դրաւ և ձեռքը ճակտին զարնելով գոչեց .

- Ի՛նչ կ'ըսես :

Միքէ որ իր բարեկամին շարժուածէն ամէն բան գուշակած էր, պարտք համարեց թաշկինակը գրպանէն հանել և աչքերը սրբել՝ օրոնք թաց չէին :

- Ի՞նչ հարուած, ի՞նչ հարուած, մըմրաց ճիրան,
արգտհատանքի նայուածք մը ուզղելով Միքէէին որ
գրամարկղին բանալին կորսնցուցած մէկու մը շուա-
րումով, չէր գիտեր որ կողմ դարսնել իր ակնարկը:

ԿԲԱԿԻ ՏԵՂ ՇԱՆԹ

Ինչպէս նախորդ թիւով գրած էինք Կրակի,
յեղափոխական թերթը, որ վերջերս սկսած է,
հրատարակուիլ Ալեքսանդրիոյ մէջ, ստիպուած
էր իր հրատարակութիւնը գաղչեցնել բարձրա-
դոյն ազգարարութեան մը անսարժ:

Այժմ՝ գոհութեամբ կիմանանք թէ նոյն
խմբագրութեամբ եւ նոյն ուղղութեամբ նոր
թերթ մը պիտի սկսի հրատարակուիլ յառաջի-
կայ շաբաթ օրէն, այս անգամ՝ ՇԱՆԹ անունով:
Կը մտղթենք որ Շանթ Կրակի բախարն չորժա-
նանայ եւ աւելի երկարատե ու կայուն կեանք մը
ունենայ, եւ Կրակէն փախչողները թո՛ղ շանթա-
հարէ անխնայ:



ԱՌԱՋՆՈՐԴԸ ՀԻՒԱՆԴ

Կը լսենք թէ մեր աննման Առաջնորդը, Աբժ.
Աղաւնունի վարդապետ, Ալեքսանդրիա գալու հը-
րաւէրը ընդունելուն պէս նախ վրան դող մը ե-
կեր է, յետոյ փորի ցաւ մը եւ վերջապէս մար-
մըրուք մը:

«Ազատ Բեմ», կը ծանուցանէ թէ Նորին Տկարութիւնը երեք օրէ ի վեր անկողնոյ կը ծառայէ:

Կարծենք առաջին անգամն է որ Ալանու-նի վարդապետ հոս գալէն ի վեր բանի մը կը ծառայէ:

Միայն թէ աչգեօք իրաւունք չունինք հարցնելու «ուր որ անկ է», թէ՛ պատրիարքա-րանը մեզ Առաջնորդ զրկած է անկողնո՞յ ծառայելու համար թէ ժողովուրդեան պէտքերուն համար:

ՈՂԿ

Հայ սոմարակալ մը որ երկար տարիներ Կ. Պօլիս Ռէժիի վարչութեան մէջ պաշտօն վարած է և իր բուռն պաշտօնավարութեան վկայադրերն ալ ունի ևւ չորս տարի ևս Վերին Եգիպտոսի մէջ ծանօթ առեւտրական տան մը քով իրի հաշուակալ ծառայած է, այժմ պատրաստ է իրի այցելու կամ մնայուն պաշտօնեայ ծառայել վաճառական տան մը մէջ: Կարող է նաև վարել արկղակալի պաշտօն և առ այդ հարկ եղած Երաշխաւարութիւնները տար Պատոններու մէջ ևւս պաշտօն կը ստանձնէ, եթէ պայմանները յարմարին: Գիւնը «Ազատ Խօսք»ի հասցէին:



New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՕ

ՆՈՐ ՎԻԻԹՈՒՌՈՒՍ ՕԹԷԼ Ազգասանդրիոյ Մօս
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒԱԾ Հալիթ թիւ 2

Առաջին կարգի օթել, մասնաւորապէս շինուած, այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով: Հիւնալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր ճաշոտրան: Ընդարձակ տառչգամ և պարտէզ: Ելեքտրոակիան լոյս: ՉԱՒԱՒՈՐ ԳԻՆ: Թեկեֆօն թիւ 370: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիլթոուիա, Ռամլէ: Թոամվայով տասը վայրկեան Ազգասանդրիայէն:


Ս. Ֆ. ՌԷՉԻԿ, ՏԻՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօնականներու և զինուորականներու համար: Բոլոր սենեակները ծովուն վրայ կը նային:

ՍԵՆ ԱՅՄՍԻՆՈՅ
ՕՐԱԳՐԱՆ ԵՒ ՏՈՒՐԱՆ ԱԵՄՍՈՒՊԵՍՏ
Գ. ՆԱՉՐԻԻՔԻԱՆ
L'AZUR
Հասցի և հեռախոսը: Կարթագեն 612, 613.
15 RUE STAMBOUL IS
ALEXANDRIE

Այս աշխատանքին մէջ կը պատրաստուին Գրօթիւն և Ներքէլ շատ Բրտներ: Պատշաճ, Գրքիւն, Գրգառն ներքեր, արձաթիւ և արիւ մեմօրաններ, Քաճիկներ ևն. Զինօրոպիի և կալվարչաթիի վարչերոյ գրքեր:
Տպարանուան ամէլ տեսակ գրքեր կայ և տարեկաններով: Հարանկար տրտերգրներ, այլաբարտեր, Նախալոյրիներ, տարագրներ, Կատակարտեր, մատագրներ, կարգը Երաւիքներ գրքեր ևն: Մասնաւոր բնակիչ ճաշիկ և ճաշութեան: Զատնու գին:
Այս աշխատանքը շարունակ կը շանձարարնէր Անքասանդրիոյ, Պաճիկի և բոլոր ելեկտրական պայմանի: Դասանկերով թէ նաև կարծ բոլոր շանձարարութիւնները ամենամեծ խաւով կը կատարուին և գտն կը նկեն ամեն զմտարան ճաշանները:
Սուր զործատաններու գինով արտի կանկարտեղով մը այլեղեյ արեւ աշխատանքը:

«ԱԶԱՏ ԽՕՄԻ» ՁԵՆԻԿԷ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒՄ
Ազգասանդրիա՝ Տ. Յ.
Հագրկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.
Թեկլալեանի խանութը:
Գահիթէ՝ լրագրավաճառ
Տ. Հունկի և Կօլաղն Քէօշ-
քի քով և «Հուսարեր»
Թերթի գրուելին մօտ:
Նախորդ շարթուան
Թիւերը կը վաճառուին
կրկին զինով:



“ԱՂԱՏ ԽՕՒՔ”-ի Պայմանները

— ԱՂԱՏ ԽՕՒՔ - ԿՇ ՀՐԱՏՈՐԱԿՈՒՄ ԵՄՍԻՔ ՕՐԵՐԸ
Եզիպոսի համար բաժնեկիցց. է.

50 ՔԻՒՇ	40 ՂՐԸ ՈՂ.Ձ
20 ”	20 ” ”

ԱՐՏԱՍԱՀՈՒՆ

ԵՐՈՊԱ	40 ՔԻՒ	10 ՅՐԱՔ
ՌՈՐՈՒՆ	” ”	4 ՐՈՒՊԼԵ
ՍՍԵՐԿԱ	” ”	2 ՏՈՒՍՔ

Բաժանորդագրուելուց կանխիկ
ՀԱՍՏ. 4 ՂՐԸ . ՈՂ.Ձ

“ԱՂԱՏ ԽՕՒՔ”-ի համար բաժնեկիցին կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին՝

Կ. Nazarethian
Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPTE)

Մանադուլներ կրկնուրուին ճաշուստ
պայտաններով.

Պատասխանատու . Խմբագիր **Ե ՕՏԵԱՆ**

Տպութ. Գորգ. Է ԿՈՂԱՐԿԵԱՆ Եզիպոսի